փողոցային մանրավաճառի ականջ ծակող ճըռռանի ձայնը:

Մեր հանդիպակաց տան բաց պատուհաններից դէպի մեզ էին գալիս մի երգի յստակ ուժեղ հնչիւնները, որոնց ընկերակցում էր ֆիս-հարմօնիայի ներդաշնակ նւագը:

–Երգողն ո՞վ է,– հարցրի տանտիկնոջից:

–Գիտէք,– ասաց նա,– այդ տան մէջ հաւաքւում են քաղաքում մնացած անգլիացի նաւաստիները, եւ անգլուհիք գալիս են երգելու հարբեցութիւնից նրանց քիչ հեռու պահելու համար:

Մեր փողոցի դուռը ամբողջ գիշերը բաց էր. բաց էին նաեւ բոլոր պատուհանները, եւ ես իմ անկողինը մոծակներից պաշտպանող ցանցի տակից երկար ժամանակ լսում էի փողոցից անցնող ճապոնացիների փայտէ կօշիկների թխկթխկոցը:

Ուրիշի սեփականութիւնը սուրբ է համարւում ճապոնացու աչքում, եւ կարող ես հանգիստ քնել պատուհաններդ բաց: